

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ  
«ԶՐԱՌԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

**ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

**Կոտայքի մարզի «Ջրատատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ներքին գնահատման  
հաշվետվություն**

**1. Նախաբան**

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի զարգացման քաղաքականության մեջ առանցքային տեղ է գրավում հանրակրթական ուսումնական հաստատությունների և ուսուցիչների գործունեության, ինչպես նաև սովորողների ուսումնառության վերջնարդյունքների գնահատման գործընթացների բարելավման ուղղությամբ կատարվող աշխատանքները: Մասնավորապես, որոշակի քայլեր են կատարվել գնահատման չափելի ցուցանիշներ սահմանելու և համապատասխան գործառույթներ ներդնելու ուղղությամբ: Դրա վկայությունը 2009 թվականի հուլիսի 10-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում հանրակրթական ուսումնական հաստատությունների ներքին և արտաքին գնահատում իրականացնելու պահանջի սահմանումն էր: Օրենքով նաև սահմանվել և հստակ տարանջատվել են ուսումնական հաստատության գործունեության վերահսկողության (հոդված 33) և ուսումնական հաստատության գործունեության գնահատման գործառույթները (հոդված 34):

Ելնելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջներից՝ ՀՀ կառավարությունը 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N1334-Ն որոշմամբ հաստատել է «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշների սահմանման և իրականացման կարգը»:

Հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին գնահատումը բխում է ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրությամբ սահմանված պահանջներից:

**2. Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության ներքին գնահատման նպատակը, խնդիրները և ընթացակարգը**

Կոտայքի մարզի «Ջրատատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ներքին գնահատումը հաստատության կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակի մշտադիտարկման և ընթացիկ հսկողության գործընթաց է: Այն հստակ կազմակերպված, նպատակաուղղված և պարբերաբար իրականացվող գործընթաց է, որի պատասխանատուն տվյալ հաստատությունն է:

Հաստատության գործունեության ներքին գնահատման նպատակն է՝ բարելավել հաստատության կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակը և բարձրացնել արդյունավետությունը կամ, այլ կերպ ասած, նպաստել ուսումնական հաստատության գործունեության հետագա բարելավմանը՝ ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսուցիչների աշխատանքի արդյունավետության և սովորողների առաջընթացի ուսումնասիրման միջոցով:

Ըստ էության՝ «Ներքին գնահատումը ուսումնական հաստատության կողմից իր գործունեության վերլուծությունն է» («Հանրակրթության մասին» ՀՀ օրենք հոդված 34):

Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի՝ հաստատության գործունեության ներքին գնահատման խնդիրներն են՝ ա) հանրակրթության պետական չափորոշիչի պահանջներից շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանության գնահատումը.

բ) ուսումնական գործընթացի կազմակերպման պայմանների և դրանց բարելավմանն ուղղված աշխատանքների գնահատումը.

գ) հանրակրթական ծրագրերի իրականացման, դասավանդման մեթոդների և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության գնահատումը.

դ) հաստատության զարգացման ուղղությունների նախանշման և զարգացման ծրագրերի մշակման խթանումը.

ե) հաստատության գործունեության գնահատման գործընթացում վարչական և մանկավարժական աշխատողների, սովորողների և ծնողների ներգրավումը:

Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջների և «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշների սահմանման և իրականացման կարգի» բաժնի 3-ի՝

- «Ներքին գնահատումն իրականացվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը: Ներքին գնահատմանը մասնակցում են ուսումնական հաստատության վարչական և մանկավարժական աշխատողները, սովորողները և նրանց ծնողները (օրինական ներկայացուցիչները)»:

- «Ներքին գնահատման հաշվետվությունն ուսումնական հաստատության տնօրենը մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 5-ը ներկայացնում է ուսումնական հաստատության խորհրդին, մանկավարժական, ծնողական, աշակերտական և այլ գործող խորհուրդներին, ինչպես նաև երկշաբաթյա ժամկետում ապահովում դրա հրապարակումը տվյալ ուսումնական հաստատությունում (տեսանելի տեղում), տեղական և (կամ) հանրապետական մամուլում, նախարարության պաշտոնական կայքում»:

- «Ներքին գնահատումն իրականացվում է ուսումնական հաստատության տնօրենի հրամանի համաձայն ձևավորված հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի (ուսումնական հաստատության խորհրդի) առնվազն երկու, մանկավարժական և ծնողական խորհրդների՝ ուսումնական հաստատության խորհրդի կազմում չընդգրկված առնվազն մեկական անդամ, տեղական ինքնակառավարման մարմնի (Երևանի քաղաքապետարանի) առնվազն երկու ներկայացուցիչներ:

Տնօրենը հանձնաժողովի նախագահին է և ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը:  
 Հանձնաժողովը հաստատում է իր աշխատակարգը, սահմանում ներքին գնահատում անցկացնելու գործողությունների ծրագիրը, մեթոդները և ժամանակացույցը:

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**Մաս 1.**

**Ընդհանուր տեղեկություններ հաստատության մասին՝**

Հաստատության անվանումը, համարը՝ **ՀՀ Կոտայքի մարզի «Ջրառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ**

Հաստատության հասցեն՝ **Կոտայքի մարզ, համայնք Ջրառատ 1-ին փողոց 1**

Հաստատության հեռախոսահամարը՝ **093388401**, էլեկտրոնային հասցեն՝ **jrarakotayk@schools**

Հաստատության ինտերնետային կայքի հասցեն՝ **jrarakotayk.schoolsite.am**

**Աղյուսակ 1. Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար**

Դասարանների թիվը	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
1-ին դասարան	1	1	1	Փոփոխություն չկա
2-րդ դասարան	1	1	1	Փոփոխություն չկա
3-րդ դասարան	1	1	1	Փոփոխություն չկա
4-րդ դասարան	1	1	1	Փոփոխություն չկա
5-րդ դասարան	1	1	1	Փոփոխություն չկա
6-րդ դասարան	1	1	1	Փոփոխություն չկա
7-րդ դասարան	1	1	1	Փոփոխություն չկա
8-րդ դասարան	1	1	1	Փոփոխություն չկա
9-րդ դասարան	1	1	1	Փոփոխություն չկա
10-րդ դասարան	1	1	1	Փոփոխություն չկա
11-րդ դասարան	1	1	1	Փոփոխություն չկա
12-րդ դասարան	1	1	1	Փոփոխություն չկա
Ընդամենը	12	12	12	Փոփոխություն չկա

*Չնայած դպրոցը միջնակարգ է, բայց միշտ ունեցել է նվազագույն անփոփոխ թվով 9 դասարան: Աշակերտների թվակազմի քիչ լինելու պատճառով դպրոցում դիտարկվող ուսումնական տարիների ընթացքում միշտ ձևավորվել է 3 երկհամակազմ դասարան: Դպրոցում սովորում են հիմնականում Կոտայքի մարզի Ջրառատ գյուղի երեխաները:*

*Ենթադրվում է՝ եթե գյուղի շփումը դադարի է լինում մոտակա բնակավայրերի հետ, ապա կավելանար աշակերտների թիվը:*

**Աղյուսակ 2. Ըստ դասարանների՝ սովորողների թիվը ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար**

Սովորողների թիվը	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
1-ին դասարան	10	7	7	Աճում և նվազում
2-րդ դասարան	6	7	7	Անփոփոխ
3-րդ դասարան	6	6	10	Աճում
4-րդ դասարան	6	7	5	նվազում
5-րդ դասարան	5	6	7	Աճում
6-րդ դասարան	5	5	6	Աճում
7-րդ դասարան	7	5	5	Անփոփոխ
8-րդ դասարան	2	7	6	Նվազում
9-րդ դասարան	13	2	8 / 7	Աճում
10-րդ դասարան	5	10	2	Նվազում
11-րդ դասարան	5	6	9	Աճում
12-րդ դասարան	1	5	5	Անփոփոխ

Ընդամենը	71	76	76	Անփոփոխ
----------	----	----	----	---------

Վերլուծելով ներկայացված տվյալները՝ գյուղում 2021-2022 ուստարում սովորողների թիվը 2020-2021 ուստարվա համեմատ մնացել է անփոփոխ:

**Աղյուսակ 3. Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար**

Ցուցանիշը	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ	70	72	77	Աճում
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա մայիսի 25-ի դրությամբ	71	76	76	Փոփոխություն չկա
Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը	10(1-ին դաս.)	12(այդ թվում 1-ին դաս.)	9( այդ թվում 1-ին դաս.)	Նվազում
Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը	0	0	1	Նվազում

2021-2022 ուստարվա ընթացքում դպրոց են ընդունվել 1-ին դասարան՝ 7 աշակերտ, 5-րդ դասարան՝ 1, 9-րդ դասարան՝ 1, ազատվել է 1 սովորող:

**Աղյուսակ 4. Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար**

Ցուցանիշը	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Ուսուցիչների ընդհանուր թիվը	16	17	18	Աճում
Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույթաչափը	12.2	13	12.6	Նվազում

Վերջին երկու տարիների ընթացքում ուսուցիչների թվաքանակը աճել է: Դասաբաշխման արդյունքում որոշ չափով ավելացել է ուսուցիչների շաբաթական ծանրաբեռնվածությունը, որը պայմանավորված է դասարան-կոմպլեկտների ձևավորմամբ:

**Աղյուսակ 5. Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար**

Ուսուցիչների թիվը	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Մինչև 30 տարեկան	-	1	2	Աճում
31-ից- 40 տարեկան	3	3	4	նվազում
41-ից -50 տարեկան	5	8	7	Անփոփոխ
51-ից -55 տարեկան	4	3	4	Անփոփոխ
56 տարեկան և ավելի	4	3	3	Նվազում

Դպրոցում ուսուցիչների տարիքային բաշխվածությունը մեծ փոփոխության չի ենթարկվել նշված ուսումնական տարիների ընթացքում, քանի որ նրանց մեծ մասն ունի միջին տարիք, համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին, աշխատում է ավյունով և ենթարկվում է դպրոցի ներքին կարգապահական կանոններին:

**Աղյուսակ 6. Տվյալներ ուսումնական հաստատության ղեկավար և վարչական կազմի վերաբերյալ**

Պաշտոնը	Անունը, ազգանունը, հայրանունը	Տվյալ պաշտոնում աշխատելու ժամանակահատվածը	Տվյալ հաստատությունում աշխատելու ժամանակահատվածը	Պետական պարգևները, կոչումները և այլն
Տնօրեն	Սուրադյան Սաթենիկ Ռաֆիկի	16.01.2020թ. առ այսօր	16.01.2020թ. առ այսօր	-
Տնօրենի տեղակալ	չկա	չկա	չկա	չկա
Հաշվապահ	Ղազարյան Հերմինե Վաչիկի	15.03.2005թ.առ այսօր	15.03.2005թ.առ այսօր	-

**Աղյուսակ 7. Տվյալներ ուսումնական հաստատության կառավարման խորհրդի կազմի վերաբերյալ**

Անուն, ազգանուն, հայրանուն	Աշխատանքի վայրը, զբաղեցրած պաշտոնը	Կրթությունը	Հաստատության խորհրդի կազմում ընդգրկված լինելու ժամանակահատվածը	Պետական պարգևները, կոչումները և այլն

Ասատրյան Գեղամ	Նախարարություն	բարձրագույն		չունի
Գրիգորյան Կիմա	Հր. թիվ 2 հիմն. դպրոց, ուսուցիչ	բարձրագույն		չունի
Հակոբյան Մարիամ	Կոտայքի մարզպետարան	բարձրագույն		չունի
Տեր- Հակոբյան Կարապետ	Կոտայքի մարզի , մարզպետարան	բարձրագույն		չունի
Ասատրյան Արթուր	Կոտայքի մարզի Ջրառատի գյուղապետարան, գյուղապետ	բարձրագույն		չունի
Հարությունյան Արթուր	Ք. Ծաղկաձոր համայնքի ղեկավար	բարձրագույն		չունի
Պողոսյան Արմեն	Կոտայքի մարզի «Ջրառատի միջնակարգ դպրոց» զինղեկ	բարձրագույն		Մայր
Կիրակոսյան Անահիտ	Կոտայքի մարզի «Ջրառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, ուսուցիչ	բարձրագույն		չունի
Ստեփանյան Սամվել	Կոտայքի մարզի «Ջրառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, ծնող	բարձրագույն		չունի
Կոչյան Գայանե	Կոտայքի մարզի «Ջրառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, ծնող	միջնակարգ		չունի
Մելքոնյան Լիանա	Կոտայքի մարզի «Ծաղկաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, ուսուցիչ	բարձրագույն		չունի
Կարապետյան Գայանե	Կոտայքի մարզի «Ծաղկաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, ուսուցիչ	բարձրագույն		չունի
Առաքելյան Արմենուհի	Կոտայքի մարզի «Ծաղկաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, ծնող	բարձրագույն		չունի
Նիկոլյան Նունե	Կոտայքի մարզի «Ծաղկաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, ծնող	բարձրագույն		չունի
Պետրոսյան Եղիշե	Կոտայքի մարզի «Ծաղկաձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, ուսուցիչ	բարձրագույն		չունի

*Դպրոցի ղեկավարման աշխատանքն առավել հեշտացնելու, դպրոցին սատար կանգնելու տեսանկյունից գնահատելի է կառավարման խորհրդի աշխատանքը: Խորհրդում ընդգրկված մարդիկ սրտացավ են, ապրում են դպրոցի առօրյայով: Դպրոցում կազմակերպվող միջոցառումների իրականացման գործում նրանցից յուրաքանչյուրը փորձում է իր լուրման ներդնել, պարզաբանել կատարվող աշխատանքի նպատակայնությունը և անհրաժեշտությունը՝ դպրոցի հեղինակությունը բարձրացնելու ուղղությամբ:*

**Մաս 2. Ուսումնական հաստատության սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանումը**

Առողջապահության համաշխարհային կազմակերպության բնորոշման համաձայն՝ առողջությունը ոչ միայն հիվանդությունների բացակայությունն է, այլև անձի հոգևոր, ֆիզիկական, ու սոցիալական լիարժեք բարեկեցությունը: Աճող սերնդի հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը հանրակրթության կարևորագույն նպատակներից է: Ուստի հաստատության խնդիրն է՝ ապահովել անվտանգ ուսումնական գործընթացի իրականացումը և սովորողների հոգևոր, ֆիզիկական ու սոցիալական լիարժեք բարեկեցությունն և համակողմանի զարգացումը:

Հաստատության գործունեության լիարժեք գնահատման գործընթացը ներառում է ուսումնական միջավայրի անվտանգության գնահատումը, որը վերաբերում է ոչ միայն սովորողների անվտանգ և առողջ կենսագործունեությանը, այլև ուսուցիչների, վարչական ու սպասարկող անձնակազմի աշխատանքի, կյանքի և առողջության պահպանման համար անվտանգ պայմաններ ապահովելուն:

Հաստատությունում սովորողները և աշխատակազմը կարող են հայտնվել արտակարգ կամ վտանգավոր իրավիճակներում, բախվել ամենատարբեր պատահարների, վթարների կամ աղետների հետ: Ուստի, հաստատության ներքին գնահատման գործընթացում անվտանգության ապահովմանը և առողջության պահպանմանը վերաբերող ցուցանիշների ու չափանիշների ներառումը ենթադրում է, որ հաստատությունը պետք է գնահատի սովորողների ֆիզիկական և հոգեկան առողջությանը, անվտանգությանը սպառնացող առկա և հնարավոր վտանգները, միաժամանակ քայլեր ձեռնարկի դրանք վերացնելու ուղղությամբ:

**2.1. Ուսումնական հաստատությունը պահպանում է շենքի և տարածքի անվտանգ շահագործումը**

*ՀՀ Կոտայքի մարզի «Ջրառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը երկար տարիներ մեղմ ասած, անմխիթար վիճակում էր գտնվում, այժմ կառավարության ծրագրով կառուցվում է մինչև 100 երեխայի համար նախատեսված մոդուլային*

հանրակրթական դպրոց, որը ծառայելու է ոչ միայն որպես ուսումնական հաստատություն, այլ կատարելու է մշակութային տան գործառույթ: Ջրառատի համայնքում հիմքից կառուցվում է մոդուլային շենքով ամբողջովին նոր դպրոց:

1.22 Կոտայքի մարզի «Ջրառատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը իր ուսումնական գործընթացը կազմակերպել է 2021 թ. Նոյեմբեր ամսից Հրազդան քաղաքի <<Անանիա Շիրակացու անվան 6 հիմնական >> դպրոցում:

Ուսումնական հաստատության տարածքը մաքուր է: Դպրոցն ունի լաբորատորիա, համակարգչային դասասենյակ: Ուսումնական հաստատության տարածքում չկան կրծողներ, վտանգավոր միջատներ և թափառող կենդանիներ: Առկայության դեպքում ուսումնական տարվա ընթացքում ձեռք են առնվում համապատասխան միջոցներ:

**2.2. Ուսումնական հաստատությունում պահպանված են սովորողների և աշխատակազմի համար ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ անվտանգության և սանիտարահիգիենիկ նորմերը, կազմակերպված են առողջության պահպանման համապատասխան ծառայություններ**

1. Ուսումնական հաստատության շենքը վերանորոգված չէ իր հիմնադրման օրվանից (01.09.1988թ.) մինչև օրս: Դպրոցը հիմնովին նորոգելու կարիք ունի:
2. Դպրոցի շենքի շահագործումը թեև համապատասխանում է շահագործման անվտանգության նորմատիվներին, սակայն շենքի հիմնանորոգումը հետաձգելով, շենքային պայմանները տարեցտարի բավարար լինելուց վերածվում են վթարայինի: Նույնիսկ երկրաշարժի հետքերը դեռ չեն վերացվել շենքի որոշ հատվածներում: Վթարային է ճաշարանային հատվածը, նկուղը և մարզադահլիճը: Որոշ հատվածներում էլ հատակը նստվածք է տվել և պատերն էլ ճաքել:
3. Հաստատության շենքում առկա են պահուստային ելքեր:
4. Ուսումնական հաստատությունն ապահովված է կապով(բջջային հեռախոս), սակայն արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգ չունի:
5. Դպրոցի շենքը հարմարեցված չէ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժի և ուսուցման ապահովման համար, չունի թեք հարթակներ և լայն դռներ:
6. Ուսումնական հաստատությունն ապահովված չէ սարքին վիճակում գտնվող հակահրդեհային, անվտանգության լրակազմով, տանիքը պատված չէ հրակայուն նյութերով:

7. Ուսումնական հաստատությունում ոչ կառուցվածքային վտանգներ կան:
8. Համակարգչային սարքավորումները տեղադրված և ամրացված են մասնագետների կողմից և վտանգավոր չեն սովորողների և աշխատակազմի համար:
9. Հաստատությունում կա անիվներով տեղաշարժվող ծանր իր(դաշնամուր), որը գտնվում է հանդիսությունների դահլիճում և ամուր ամրացված է բեմին և անվտանգ է:
10. Ուսումնական հաստատության կահույքի բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները, դեկորատիվ իրերը:
11. Միջանցքների և որոշ դասասենյակների հատակները(մանրահատակ) քայքայված են, անհրաժեշտություն կա հիմնանորոգման, սայթաքուն չեն և ծածկված չեն ուղեգորգերով:
12. Ուսումնական հաստատության առաջին հարկի պատուհանները չունեն մետաղյա վանդակաճաղեր:
13. Ուսումնական հաստատության կահույքը հնաճ է և հնամաշ, կարիք ունի թարմացման և նորացման:
14. Ուսումնական հաստատությունում մշակված և առկա է սովորողների ու անձնակազմի տարհանման պլան:
15. Ուսումնական հաստատության նախասրահում, բոլոր հարկերում, դասասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցադրված:
16. Ուսումնական հաստատության տարհանման ուղիները ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով:

**Աղյուսակ 8. Տվյալներ դասասենյակներում սեղան-նստարանների դասավորվածության և թվի վերաբերյալ**

2021-2022 ուստարի

Դասասենյակի համարը	Դասասենյակի մակերեսը (քմ)	Սեղան-նստարանների դասավորվածության ձևը (շարքերով, շրջանաձև, T-աձև, II-աձև, խառը)	Սեղան-նստարանների թիվը	Սեղան-նստարանների շարքերի և միմյանց միջև հեռավորությունները
Դասասենյակ №1, 1-ին դաս.	50.4	Շարքերով, շրջանաձև	7	50-100սմ
Դասասենյակ №2, 2-րդ դաս.	50.4	Շարքերով, շրջանաձև	7	50-100սմ
Դասասենյակ №3 3/ 4-րդ դաս.	58.8	Շարքերով	8	50-100սմ
Դասասենյակ №4, 5/6-րդ դաս.	58.8	Շարքերով	8	50-100սմ
Դասասենյակ №5, 7րդ դաս	12.37	Շարքերով	3	30-40սմ
Դասասենյակ №6, 8-րդ դաս.	53.57	Շարքերով	7	50-100սմ
Դասասենյակ №7, 9-րդ դաս.	53.57	Շարքերով	9	50-100սմ

Դասասենյակ №8, 10/11-րդ դաս.	53.57	Շարքերով	7	50-100սմ
Դասասենյակ №9, 12	12.37	Շարքերով	4	30-40սմ

2020-2021 ուստարի

Դասասենյակի համարը	Դասասենյակի մակերեսը (քմ)	Սեղան-նստարանների դասավորվածության ձևը (շարքերով, շրջանաձև, T-աձև, II-աձև, խառը)	Սեղան-նստարանների թիվը	Սեղան-նստարանների շարքերի և միմյանց միջև հեռավորությունները
Դասասենյակ №1, 1-ին դաս.	50.4	Շարքերով, շրջանաձև	$3 \times 2 = 6$	50-100սմ
Դասասենյակ №2, 2/3-րդ դաս.	58.8	Շրջանաձև, II-աձև,	$3 \times 1 = 3$	50-100սմ
Դասասենյակ №3, 4-րդ դաս.	58.8	Շարքերով	$3 \times 3 = 9$	50-100սմ
Դասասենյակ №4, 5/6-րդ դաս.	58.8	Շարքերով	$3 \times 3 = 9$	50-100սմ
Դասասենյակ №5, 7-րդ դաս.	12.37	Շարքերով	$3 \times 3 = 9$	50-100սմ
Դասասենյակ №6, 8-րդ դաս.	53.57	Շարքերով	$3 \times 2 = 6$	30-40սմ
Դասասենյակ №7, 9-րդ դաս.	53.57	Շարքերով	$2 \times 2 = 4$	50-100սմ
Դասասենյակ №8, 10/11-րդ դաս.	53.57	Շարքերով	$2 \times 2 = 4$	30-40սմ

2019-2020 ուստարի

Դասասենյակի համարը	Դասասենյակի մակերեսը (քմ)	Սեղան-նստարանների դասավորվածության ձևը (շարքերով, շրջանաձև, T-աձև, II-աձև, խառը)	Սեղան-նստարանների թիվը	Սեղան-նստարանների շարքերի և միմյանց միջև հեռավորությունները
Դասասենյակ №1, 1-ին դաս.	58.8	Շարքերով, շրջանաձև	$3 \times 2 = 6$	50-100սմ
Դասասենյակ №2, 2/3-րդ դաս.	50.4	Շրջանաձև, II-աձև,	$3 \times 1 = 3$	50-100սմ
Դասասենյակ №3, 4-րդ դաս.	38.43	Շարքերով	$3 \times 3 = 9$	50-100սմ
Դասասենյակ №4, 5/6-րդ դաս.	53.57	Շարքերով	$3 \times 3 = 9$	50-100սմ
Դասասենյակ №5, 7-րդ դաս.	54.3	Շարքերով	$3 \times 3 = 9$	50-100սմ
Դասասենյակ №6, 8-րդ դաս.	50.52	Շարքերով	$3 \times 2 = 6$	30-40սմ
Դասասենյակ №7, 9-րդ դաս.	12.37	Շարքերով	$2 \times 2 = 4$	50-100սմ
Դասասենյակ №8, 10/11-րդ դաս.	16.34	Շարքերով	$2 \times 2 = 4$	30-40սմ

**Աղյուսակ 9. Տվյալներ յուրաքանչյուր դասասենյակներում մեկ սովորողին ընկնող մակերեսի վերաբերյալ**

2021-2022 ուստարի

Դասասենյակի համարը	Դասասենյակի մակերեսը (քմ)	Մեկ սովորողին ընկնող մակերեսը(քմ)	Նորմերից պակաս կամ ավել մակերեսը(քմ)
Դասասենյակ №1՝ 1-ին դաս.	50.4	7.2	+ 7.08
Դասասենյակ №2՝ 2-րդ դաս.	50.4	7,2	+1.52
Դասասենյակ №3՝ 3/4-րդ դաս.	58.8	3.72	+1.17
Դասասենյակ №4՝ 5/6-րդ դաս.	53.57	4.87	+ 0.76
Դասասենյակ №5՝ 7-րդ դաս	12.37	2,47	+ 3.11
Դասասենյակ №6՝ 8-րդ դաս.	53.57	8.9	+2
Դասասենյակ №7՝ 9-րդ դաս.	53.57	4.87	+2.37
Դասասենյակ №7՝ 10/11 -րդ դաս.	53.57	7,6	+1.17
Դասասենյակ №9՝ 12-րդ դաս.	12.37	2,47	+ 3.11

Աշակերտների թվից էլնելով՝ յուրաքանչյուր դասաժամին դասասենյակի մակերեսը բավարարում է աշակերտների թույլատրելի նորմին և հետևաբար յուրաքանչյուր աշակերտին ընկնող մակերեսը բավարար է:

Աղյուսակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլոր դասարաններում աշակերտների թվի պակասի պատճառով մեկ սովորողին ընկնող մակերեսը նորմալից ավել է՝ COVID-19-ի չափանիշներին համապատասխանում է:

**2.4. Ուսումնական հաստատության անձնակազմի և սովորողների անվտանգ կենսագործունեությունը նկարագրող չափանիշներ**

Ուսումնական տարվա սկզբին տնօրենի հրամանով ստեղծվում է ՔՊ և ԱԲ շտաբ համապատասխան խմբերով:

Դպրոցն ունի քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում գործելու պլաններ, համաձայն որոնց իրականացվում են վարժանքներ, որոնց մասին գրառվում են գրանցամատյանում:

Ուսումնական տարվա ընթացքում անձնակազմի և աշակերտների համար կազմակերպվում է տարհանման իրավիճակ՝ վարքականոններին ծանոթացնելու նպատակով:

ՆԶՊ դասաժամին աշակերտներին տրվում է տեղեկատվություն անվտանգության միջոցների և դրանց օգտագործման կանոնների վերաբերյալ:

Ուսումնական հաստատության աշխատակազմը ըստ պլանի նախապատրաստվում է արտակարգ իրավիճակներում գործելուն:

ՀՀ գտնվում է սեյսմիկ գոտում և չեն բացառվում երկրաշարժերը: Յուրաքանչյուր ուսումնական տարում դասղեկի ժամերին աշակերտները ստանում են տարաբնույթ տեղեկատվություն բնական և տեխնածին աղետների վերաբերյալ: Աշակերտներն իրենք, հենվելով օրինակների վրա, ինչպես նաև օգտագործելով ստացած տեղեկատվությունը, հստակ պատկերացում են կազմում նշված երևույթների մասին:

Ըստ ՔՊ և ԱԲ միջոցառումների անցկացման պլանի 3-րդ, 6-րդ և 7-րդ դասարաններում անցկացվում են պարապմունքներ:

Ուսումնական հաստատությունն ապահովված չէ լոկալ ջեռուցման համակարգով:

Հաստատության բոլոր դասասենյակներում ջեռուցումն ապահովվում է փայտի վառարաններով: Ջեռուցման սեզոնին դասասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին:

Ուսումնական հաստատության միջանցքները չեն ջեռուցվում, այնտեղ ջերմաստիճանը չի համապատասխանում սանիտարահիգիենիկ նորմերին:

Դպրոցն ապահովված չէ հոսող խմելու ջրով:

Ուսումնական հաստատության բոլոր հարկերում առկա են առանձնացված սանհանգույցներ տղաների և աղջիկների համար, որոնցից միայն 10%-ն է գործում: Բոլոր սանհանգույցներն հիմնանորոգման խիստ կարիք ունեն:

Դպրոցը չունի հաշմանդամություն ունեցող աշակերտներ:

Ուսումնական հաստատությունում առկա է նախագծին համապատասխան ճաշարանային տարածք, Հունվար ամսից կազմակերպվել է տարրական դասարանների սովորողների համար անվճար սնունդ:

Ուսումնական հաստատությունում կա բուժկետ, որտեղ հնարավոր լինի առաջին բուժօգնություն ցուցաբերել: Դպրոցը ունի բուժաշխատող:

**ՀԱՐՑԱՇԱՐԸ N°1**

1. Տիրապետո՞ւմ եք արդյոք արտակարգ իրավիճակում գործելու վարքականոններին:
2. Դասասենյակների օդի ջերմաստիճանը ջեռուցման ժամանակահատվածում համապատասխանո՞ւմ է սանիտարահիգիենիկ նորմերին:
3. Տեղյա՞կ եք արդյոք, որ դպրոցի սանհանգույցներն ապահովված չեն շուրջօրյա հոսող ջրով:
4. Տեղյա՞կ եք արդյոք, թե դպրոցի սանհանգույցներից քանիսն են գործում:
5. Տեղյա՞կ եք արդյոք, թե դպրոցի սանհանգույցներն ինչու չեն գործում:
6. Տեղյա՞կ եք, որ դպրոցը չունի բուժկետ:
7. Առաջին բուժօգնություն ցուցաբերվո՞ւմ է դպրոցի կոլեկտիվին:
8. Առաջին բուժօգնություն ցուցաբերո՞ւմ է գյուղի բուժքույրը:  
 Կատարվել են հարցումներ վերոնշյալ հարցաշարով, որոնց մասնակցել է դպրոցի երկրորդ շահառու խումբը՝ աշխատակազմի 16 ներկայացուցիչ, առաջին շահառու խմբը՝ 54 աշակերտներ տարբեր դասարաններից:  
 Առաջին շահառու խմբի անդամները՝ հարցված աշակերտների 60%-ը, տեղյակ է, որ դասասենյակների օդի ջերմաստիճանը ջեռուցման ժամանակահատվածում համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին, 76%-ը տեղյակ է, որ դպրոցի սանհանգույցներն ապահովված չեն շուրջօրյա հոսող ջրով, 76%-ը տեղյակ է, թե սանհանգույցներից քանիսն են գործում, 62%-ը տեղյակ է, թե դպրոցի սանհանգույցներն ինչու չեն գործում, 97%-ը տեղյակ է, որ դպրոցը չունի բուժկետ, 90%-ը տեղյակ է, որ առաջին բուժօգնություն ցուցաբերվում է դպրոցի կոլեկտիվին, 89%-ը նշում է, որ առաջին բուժօգնություն դպրոցի կոլեկտիվին ցուցաբերում է գյուղի բուժքույրը:  
 Դպրոցի երկրորդ շահառու խումբը՝ աշխատակազմի 16 ներկայացուցիչ, 100%-ով տեղեկացված են դպրոցի սանիտարահիգիենիկ իրավիճակին, ցուցաբերվող առաջին բուժօգնությանը:

**Աղյուսակ 10. Տվյալներ արտակարգ իրավիճակներում հաստատության անձնակազմի և սովորողների տեղեկացված լինելու մասին**

Դիտարկվման ամսաթիվ 12.05.2022թ.

Հ/Հ	Չ Ա Փ Ա Ն Ի Ծ	ԿԱՏԱՐԵԼ ՆՇՈՒՄՆԵՐ
1.	Ուսումնական հաստատության աշխատակազմը և սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոնին	Տիրապետում են
	Ուսումնական հաստատության աշխատակազմը և սովորողները	Հաստատության աշխատակազմը



2.	տեղեկացված են հաստատությունում առկա անվտանգության միջոցների/ էլեկտրական վահանակի, հրշեջ տեղեկատուի, կրակմարիչների և այլն / տեղերին ու տիրապետում են դրանց օգտագործման կանոններին	և սովորողները տեղեկացված են /միայն էլեկտրական վահանակի/ տեղին:
----	--	--

Կատարվել են հարցումներ, որոնց մասնակցել են դպրոցի երկրորդ շահառու խումբը՝ աշխատակազմի 14 ներկայացուցիչ, առաջին շահառու խումբը՝ 59 աշակերտներ տարբեր դասարաններից:

Առաջին շահառու խմբի անդամները՝ հարցված աշակերտների 97%-ը, գիտի աղետներից պաշտպանվելու վարքականոնները, 95%-ը՝ հակազգահից և շնչադիմակից օգտվելու ձևերը, 84% -ը՝ դպրոցի տարհանման բոլոր ուղիները: Երկրորդ շահառու խումբը՝ հարցված աշխատակազմի 79%-ը, գիտի էլ. վահանակների, հրշեջ տեղեկատուի տեղերը, կարող է օգտվել կրակմարիչներից, 93%-ը գիտի դպրոցի տարհանման բոլոր ուղիները:

**Աղյուսակ 11. Տվյալներ տեղական վտանգների գնահատման և աղետների պատրաստվածության ու հակազդման մեխանիզմների ուղղությամբ հաստատությունում իրականացվող միջոցառումների վերաբերյալ**

Հ/Հ	Ամսաթիվ	Դասարան	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Մասնակիցների թիվը
1.	01.02	7-րդ	Կոլեկտիվ պաշտպանության միջոցներ:	6
2.	01.02	6-րդ	ՔՊ և ԱԻ նպատակը և խնդիրները:	7
3.	06.02	3-րդ	Տեղեկացնել ՔՊ և ԱԻ հիմնահարցերի վերաբերյալ:	7
4.	06.02	3-րդ	Անհատական պաշտպանության միջոցների ստուգումը և օգտագործումը:	7
5.	06.02	6-րդ	Մասնաշաղկի և զանգվածային խոցման ժամանակակից միջոցներ:	7
6.	08.02	3-րդ	ԱԻ-ում բնակչության տեղեկացման և լրատվական միջոցներ, ինչպես նաև գործելաձևերը:	7
7.	08.02	3-րդ	Շնչադիմակի նշանակությունը և նրանից օգտվելու կանոնները:	7
8.	08.02	6-րդ	Անհատական պաշտպանության միջոցներ:	7
9.	13.02	7-րդ	Աշակերտների գործելաձևը հակառակորդի հարձակման վտանգի և տարերային աղետի ժամանակ:	6
10.	13.02	6-րդ	Տվյալ տեղանքին բնորոշ հնարավոր վթարներից և աղետներից պաշտպանվելը:	7
11.	23.02	3-րդ	Հակազգահի նշանակությունը և նրանից օգտվելու կանոնները:	7
12.	25.02	6-րդ	Աշակերտների գործելաձևը հակառակորդի հարձակման վտանգի և տարերային աղետի ժամանակ:	7
13.	27.02	3-րդ	Աշակերտներին ճիշտ տեղեկացումը և ապաստանումը, անվտանգության կանոնների պահպանումը:	7
14.	27.02	7-րդ	Ինքնօգնություն և փոխօգնություն ռադիոակտիվ նյութերի արտանետման և վթարների ժամանակ:	6
15.	06.03	6-րդ	Ապաստարաններում և թաքստոցներում տեղակայվելը և այնտեղ մնալու կանոնների պահպանումը:	7
16.	06.03	3-րդ	Աշակերտների պաշտպանության միջոցները՝ վթարների, տարերային աղետների ժամանակ:	7
17.	06.03	6-րդ	Աշակերտների գործելաձևը ՉԽԶ-ի խոցման ժամանակ:	7
18.	14.03	7-րդ	Ինքնօգնություն և փոխօգնություն ՌԻՆԹՆ-ի արտանետման վթարների ժամանակ:	6
19.	20.03	7-րդ	Ինքնօգնություն և փոխօգնություն այրվածքների և կոտրվածքների ժամանակ:	6
20.	22.03	7-րդ	Ինքնօգնություն և փոխօգնություն կենսաբանական և բակտերիոլոգիական վթարների ժամանակ:	6
21.	22.03	6-րդ	Ինքնօգնություն և փոխօգնություն դժբախտ դեպքերի ժամանակ	7

Կատարվել են հարցումներ, որոնց մասնակցել են դպրոցի երկրորդ շահառու խումբը՝ աշխատակազմի 14 ներկայացուցիչ, առաջին շահառու խումբը՝ 59 աշակերտ տարբեր դասարաններից:

Երկրորդ շահառու խումբը՝ աշխատակազմի 14 հարցվածների 98%-ը, և առաջին շահառու խմբի՝ 59 աշակերտների 100%-ը,

գտնում է, որ տեղական վտանգների գնահատման և աղետներին պատրաստվածության ու հակադրման մեխանիզմների ուղղությամբ հաստատությունում հաճախակի կամ շատ են անցկացվում:

**Հարցաթերթիկ №2**

(անձնակազմի համար)

1. Դպրոցում անցկացվում է՞ են ՔՊ և ԱԻ միջոցառումներ:
2. Գիտե՞ք դպրոցի էլեկտրական վահանակի տեղը:
3. Գիտե՞ք հրշեջ վահանակների և կրակմարիչների տեղերը:
4. Կարո՞ղ եք օգտվել կրակմարիչներից:
5. Գիտե՞՞ք դպրոցի տարհանման ուղիները:

**Հարցաթերթիկ №3**

(աշակերտների համար)

1. Դպրոցում անցկացվո՞ւմ են ՔՊ և ԱԻ միջոցառումներ:
2. Գիտե՞ք աղետներից պաշտպանվելու վարքականոնները:
3. Գիտե՞ք հակազգահց օգտվելու ձևերը:
4. Գիտե՞ք դպրոցի տարհանման ուղիները:
5. Գիտե՞ք շնչադիմակ պատրաստելու ձևերը:

Ըստ հարցումների պատասխանների՝ շահառուները գտնում են, որ դպրոցում հաճախ են անցկացվում ՔՊ և ԱԻ միջոցառումներ: Գիտեն աղետներից պաշտպանվելու վարքականոնները, հակազգահց օգտվելու ձևերը և կարողանում են օգտվել կրակմարիչներից, գիտեն դպրոցի էլեկտրական վահանակի տեղը և տարհանման ուղիները: Աշակերտների որոշ մասը՝ 63%-ը, կարողանում է պատրաստել շնչադիմակներ:

Ըստ հարցումների պատասխանների՝ շահառուները գտնում են, որ երկրաշարժի ժամանակ հաստատությունը պետք է դատարկել մարդկանցից որքան հնարավոր է արագ: Նրանք հստակ պատկերացում ունեն այն մասին, որ հաստատության շենքը հնարավոր է փլուզման ենթարկվի, որի պատճառով որքան հնարավոր է մարդիկ արագ պետք է դուրս գան շենքից, հաստատությունը տարհանման համար պետք է պարտադիր ունենա պահուստային ելքեր՝ մարդկային կուտակումներ և խցանումներ չառաջացնելու նպատակով:

Կոտայքի մարզի Ջրառատի միջնակարգ դպրոցն ունի պահուստային երկու ելք:

**Աղյուսակ 12. Տվյալներ ուսումնական հաստատության քաղաքացիական պաշտպանության պլանից բխող սովորողների և աշխատակազմի հետ տարվա ընթացքում իրականացվող միջոցառումների և վարժանքների վերաբերյալ**

Հ/Հ	Ամսաթիվ	Դասարան	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Մասնակից թիվը
1.	15.09	1-12-րդ	Դպրոցում անցկացվել է «Օբյեկտային վարժանք»: Տարհանվել է 1-12-րդ դասարանի աշակերտները և անձնակազմը:	105
2.	22.09	Անձնակազմ	Անցկացվել է ընդհանուր խորհուրդ «ՔՊ և ԱԻ հիմնահարցերի դրվածքը դպրոցում, դրանց կատարելագործման ուղիները» թեմայով:	24
3.	23.09	Դասղեկ և դասվար	Նախապատրաստել 3-րդ, 6-րդ և 7-րդ դասարանների դասղեկներին և դասվարներին ՔՊ և ԱԻ հիմնահարցերի մասին:	3
4.	փետրվար - մարտ	3-րդ, 6-րդ, 7-րդ	Դասղեկները և դասվարները անցկացրել են ՔՊ և ԱԻ վերաբերյալ դասեր, որոնք լրացված են դասամատյաններում և գրանցամատյաններում:	3
5.	21.02	3-րդ, 6-րդ, 7-րդ	Նիստերի դահլիճում անցկացվել է ՔՊ և ԱԻ հիմնահարցերին նվիրված հարցազրույց, աշակերտների օգնությամբ կատարվել է հակազգահ հագնել և հանելու ճիշտ ձևերը:	20
6.	02.03	Դպրոց	Դպրոցում հայտարարվել է «ՕԴԱՅԻՆ ՏԱԳՆԱՊ»: Աշխատակազմը և աշակերտները հավաքվել են դպրոցի բակում: Միջոցառմանը մասնակցում էին դպրոցի անձնակազմը և աշակերտները:	105

Կատարվել են հարցումներ, որոնց մասնակցել են դպրոցի երկրորդ շահառու խումբը՝ աշխատակազմի 14 ներկայացուցիչ, առաջին շահառու խումբը՝ 59 աշակերտ տարբեր դասարաններից:

Երկրորդ շահառու խումբը՝ աշխատակազմի 14 հարցվածների 98%-ը, և առաջին շահառու խմբի՝ 59 աշակերտների 97% -ը գտնում են, որ ուսումնական տարվա ընթացքում սովորողների և աշխատակազմի հետ իրականացվել են քաղաքացիական պաշտպանության պլանից բխող միջոցառումներ և վարժանքներ:

**Աղյուսակ 13. Տվյալներ ուսումնական հաստատության շենքի ջեռուցման պայմանների մասին**

Դիտարկման ժամանակահատվածը՝ 2020-2021թթ. ջեռուցման սեզոն

Ուսումնական հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով(ընտրել այդ կամ ոչ այունակը)			
Այո	Դպրոցը չունի լոկալ ջեռուցման համակարգ: Դպրոցի դասասենյակները ջեռուցվում են փայտի վառարաններով Ոչ(նկարագրել թե ինչպես է ջեռուցվում հաստատության շենքը)		
Դասասենյակները, դահլիճները, այլ սենյակները, միջանցքները և այլն	Ջեռուցման ձևը, (վառելիքի տեսակը)	Ջերմաստիճանը շրջայցի պահին	Ջեռուցման ժամերը
Դասասենյակ N1	Փայտի վառարան	(18÷22)°C	9 <sup>00</sup> ÷15 <sup>20</sup>
Դասասենյակ N2	Փայտի վառարան	(18÷22)°C	9 <sup>00</sup> ÷15 <sup>20</sup>
Դասասենյակ N3	Փայտի վառարան	(18÷22)°C	9 <sup>00</sup> ÷15 <sup>20</sup>
Դասասենյակ N4	Փայտի վառարան	(18÷22)°C	9 <sup>00</sup> ÷15 <sup>20</sup>

Դասասենյակ N5	Փայտի վառարան	(18÷22)°C	900÷1520
Դասասենյակ N6	Փայտի վառարան	(18÷22)°C	900÷1520
Դասասենյակ N7	Փայտի վառարան	(18÷22)°C	900÷1520
Դասասենյակ N8	Փայտի վառարան	(18÷22)°C	900÷1520
Մարզադահլիճ	չջեռուցվող		
Միջոցառումների դահլիճ	Փայտի վառարան	(15÷18)°C	1520 –ից հետո
Ուսուցչանոց	Փայտի վառարան	(18÷20)°C	900÷1520
Գրադարան	Էլեկտրատաքացուցիչ	(10÷13)°C	900÷1520
Համակարգչային սենյակ	Էլեկտրատաքացուցիչ	(18÷20)°C	900÷1520
Ճաշարան	Փայտի վառարան	(18÷20)°C	1000 ÷ 1300
1-ին հարկի միջանցք	Փայտի վառարան	(10÷13)°C	900÷1520
2-րդ հարկի միջանցք	Էլեկտրատաքացուցիչ	(10÷13)°C	900÷1520

Կոտայքի մարզի Ջրատատի միջնակարգ դպրոցը երբեք չի ունեցել լոկալ ջեռուցում, որի հետևանքով ձմռան ամիսներին ջեռուցվել են միայն դպրոցի դասասենյակները, ուսուցչանոցը, միջոցառումների դահլիճը և համակարգչային սենյակը: Միջանցքների որոշ հատվածները, սանհանգույցները և այլ հատվածներ չեն ջեռուցվում:

Այնուամենայնիվ, ջեռուցվող հատվածներում ունենք բավարար ջերմային վիճակ, որը գտնվել է Հրազդանի սանէպիդեմիայանի ամենօրյա հսկողության տակ:

Ջեռուցման հետ կապված դպրոցն ունի լուրջ խնդիրներ, որոնցից մեկն էլ դասասենյակների դռների և պատուհանների քայքայված, անմխիթար վիճակն է:

**Աղյուսակ 14. Տվյալներ ուսումնական հաստատության ջրամատակարարման, սանհանգույցների (կոյուղացման) առկայության և դրանց վիճակի վերաբերյալ**

Դիտարկման ժամանակահատվածը՝ 2019-2020

Հաստատության ջրամատակարարումը (ընթացքում համապատասխան սյունակը)		
Ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով (ընդգծել այդ կամ ոչ բառերը)	Ապահովված է հոսող խմելու ջրով, բայց ոչ շուրջօրյա	Ապահովված չէ հոսող խմելու ջրով
	Օրական քանի՞ ժամ է ջրամատակարարումը	(նկարագրել խնդիրը)
Ոչ	-	(պարզաբանել ինչպե՞ս է լուծվում ջրամատակարարման հարցը)
		Կազմակերպվել է գնումների գործընթաց նոր ջրագիծ կառուցելու նպատակով:

Հաստատության սանհանգույցները և դրանց վիճակը						
Շենքի հարկը	Սանհանգույցների թիվը	Առջիկների սանհանգույցի առկայությունը (ընդգծել այդ կամ ոչ բառերը)	Տղաների սանհանգույցի առկայությունը (ընդգծել այդ կամ ոչ բառերը)	Հիգիենայի պարագաների առկայությունը (ընդգծել այդ կամ ոչ բառերը)	Հարմարեցվածությունը հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին (ընդգծել այդ կամ ոչ բառերը)	Վերանորոգված են, թե ոչ (ընդգծել այդ կամ ոչ բառերը)
1-ին	7	Այո	Ոչ	Ոչ	Ոչ	Ոչ
2-րդ	4	Ոչ	Այո	Ոչ	Ոչ	Ոչ

1. Բազմաթիվ տեխնիկական պատճառներով դպրոցի ջրամատակարարումը բացակայում է երկար տարիներ:
2. Երկար տարիների մեր ջանքերը արդյունք չեն տվել ջրամատակարարումը վերականգնելու համար, քանի որ պահանջվում են կապիտալ մեծ ծախսեր:
4. Ջրամատակարարման, սանհանգույցների (կոյուղագծերի) խողովակների ժանգոտված և փտած լինելու պատճառով 9 սանհանգույց չի գործում: Գործում է 2 սանհանգույց, որոնք չեն համապատասխանում սանիտարահիգիենիկ պայմաններին:
5. Ջրամատակարարման և սանհանգույցների համակարգը վերականգնելու համար պահանջվում է մեծ ներդրում կատարել:

**Աղյուսակ 15. Տվյալներ ուսումնական հաստատությունում սննդի կետի առկայության և սննդի կազմակերպման վերաբերյալ**

Դիտարկման ժամանակահատվածը՝ 2021-2022

Ուսումնական հաստատությունում առկա է սննդի կետ, թե ոչ (ընտրել այդ կամ ոչ սյունակը)						
Այո			Ոչ (նկարագրել, թե ինչպես է կազմակերպվում սովորողների և աշխատակիցների սննդի ապահովման խնդիրը)			
Ուսումնական հաստատության սննդի կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պատասխաններ, թե ոչ (ընտրել այդ կամ ոչ սյունակը)						
Այո			Այո			
Նկարագրել սննդի կետի սանիտարական վիճակը՝ ըստ հակահամաճարակային ծառայության						
Սննդի կետի	Միաժամանակ	Սառը և տաք	Լվացարանի և	Տաք սննդի հնա-	Վերանորոգված չէ,	

տեսակը (բուժետ, ճաշարան )	անվելու հնարա վորություն ունե ցող անձնաց թիվը և արածքը (քմ)	հոսող ջրի առկայությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը)	հիգիենայի պարագաների առկայությունը (ընդգծել այո կամ ոչ առերը)	բավորությունը (ընդգծել այո կամ ոչ բառերը)	թե ոչ (ընդգծել այո կամ ոչ բառերը)
ճաշարան	50 անձ, 151.1մ <sup>2</sup>	այո	այո	այո	Ոչ

Հիգիենայի պահանջներով կազմված դասացուցակը հնարավորություն է տալիս աշակերտներին սնվելը կազմակերպվել է <<Անանիա Շիրակացու անվան 6 հիմնական դպրոցի>> ճաշարանում:

Աճող օրգանիզմի համար տրվել է տաք սնունդ և բազմատեսակ սնունդ:

Դպրոցում «Տաք սնունդ» ծրագիրը իրականացնվել է:

**Աղյուսակ 16. Տվյալներ ուսումնական հաստատությունում բուժկետի առկայության և բուժսպասարկման վիճակի վերաբերյալ**

Դիտարկման ժամանակահատվածը՝ 2020-2021

Ուսումնական հաստատությունում առկա է բուժկետ (ընտրել այո կամ ոչ այունակը)					
Այո		Ոչ (նկարագրել, թե ինչպես է կազմակերպվում սովորողներին և աշխատակիցներին առաջին բուժօգնության տրամադրման խնդիրը:)			
Ուսումնական հաստատությունն ունի բուժաշխատող և կարող է տրամադրել առաջին բուժօգնություն (ընդգծել այո կամ ոչ բառերը)					
Այո, Ոչ					
Բուժկետի գտնվելու հարկը և տարածքը (քմ)	Բուժաշխատողների թիվը և նրանց պաշտոնները	Բուժկետում առկա գույքը	Բուժկետը վերանորոգված է, թե ոչ (ընդգծել այո կամ ոչ բառերը)	Մանիտաբակյան վիճակը	Առաջին բուժօգնության միջոցների և դեղերի առկայությունը
Բուժկետ կա	Բուժաշխատող կա	Բուժական գույք չկա	Այո, Ոչ	Բավարար	Առկա է Ջրառատ գյուղի բուժքրոջ մոտ

1. Առաջին բուժօգնություն ցուցաբերում է Կոտայքի մարզի Ջրառատ գյուղի բուժքույրը:

2. Անհրաժեշտ է դպրոցում ունենալ բուժկետ:

3. Անհրաժեշտ է դպրոցում ունենալ առաջին բուժօգնության միջոցներ և դեղորայք:

4. 2014-2015 ուստարվանից դպրոցին առաջին բուժօգնության դեղորայք է տրամադրել Հրազդանի բժշկական կենտրոնը:

5. Աշակերտների պարտադիր բուժօգնությունը կատարվում է ժամանակին, առանց խոչընդոտների, Հրազդանի բժշկական կենտրոնում:

6. Առաջարկում ենք տարածքային վերահսկող բուժիկմնարկին /պոլիկլինիկա/ առավել մեծ չափով ուշադրության կենտրոնում պահել դեղորայքային վերահսկումը և նպաստել իրականացնելու սովորողների առողջության բազմակողմանի ստուգումներ:

**2.5. Սոցիալական առողջության չափանիշներ**

**Աղյուսակ 17. Տվյալներ ուսումնական հաստատության սովորողների ֆիզիկական, հոգեկան և սոցիալական առողջությանն ուղղված աշխատանքների վերաբերյալ**

Հաստատությունում գրանցված ակտիվ, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը տվյալ ուստարում			
Դեպքը	Ամսաթիվը	Դասարանը, սովորողը(ները)	Ձեռնարկված միջոցառումը
1. Չեն գրանցվել	-	-	-
Ակտիվ, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործումն կանխարգելելու ուղղությամբ իրականացված ուսումնական ծրագրերը և միջոցառումները			
Ծրագիրը կամ միջոցառումը (նշել թեման)		Ամսաթիվը	Դասարանը
1.Դասղեկական ժամեր 1)«Ակտիվ և ծխախոտի ազդեցությունը օրգանիզմի վրա» 2)«Առողջ սնունդ» 3)«Վիտամին»		Տարվա ընթացքում	8-11րդ
2. 2-րդ կիսամյակում՝ 14 դասաժամ «Առողջ ապրելակերպ» դասընթացի դասավանդում		Փետրվարի ընթացքում	8-11-րդ դասարաններ
3. «Արատավոր սովորույթները դեռահասների շրջանում»		Մարտ	7-12-րդ դասարաններ
4. Ոստիկանության բաժնի և առողջապատության աշխատակիցների հետ «Առողջ ապրելակերպ»		Ապրիլ	7-11-րդ դասարաններ
Հաստատությունում գրանցված մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքերը, դրանց բացահայտմանն ու կանխարգելմանն ուղղված քայլերը			
Դեպքը	Ամսաթիվը	Դասարանը	Բացահայտմանն ու կանխմանն ուղղված քայլերը
1. Չեն գրանցվել	-	-	-
Հաստատությունում սովորողների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին գեկուցման, դրանց կանխարգելման և հանրային քննարկման մեխանիզմները			
Դեպքը	Ամսաթիվ	Դասարանը, սովորողը(ները)	Բացահայտման, քննարկման մեխանիզմը, ձեռնարկված քայլերը և կանխարգելման ուղիները

Չեն գրանցվել	-	-	-
Ուսումնական հաստատության կողմից երեխայի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, երեխային զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկմանն ուղղված միջոցառումներ և մեխանիզմներ			
Միջոցառում	Ամսաթիվ	Մասնակիցները, դրանց թիվը	Առաջադրված մեխանիզմ
1. Ծնողական ժողովներ	Տարվա ընթացքում	Համադպրոցական	
Հաստատությունում կազմակերպված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված միջոցառումները՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի փոխանցման ուղիների և կանխարգելման մասին սովորողների գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով			
Դասընթացի անվանումը, միջոցառման թեման, օգտագործված ուսումնամեթոդական նյութերը	Ամսաթիվ	Դասարանը (ները)	Մասնակիցների թիվը
Առողջ ապրելակերպ 1.«ՄԻԱՎ/ՁԻԱՀ»թեմայով սեմինարներ	«ՄԻԱՎ/ՁԻԱՀ»-ի կանխարգելման համաշխարհային օրերին	8-11-րդ դասարաններ (14-17) տարեկան	18
Ուսումնական հաստատության ստեղծած ուսումնամեթոդական նյութերը և կազմակերպված միջոցառումները՝ ուղղված բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեմ			
Դասընթացի անվանումը, միջոցառման թեման, օգտագործված ուսումնամեթոդական նյութերը	Ամսաթիվ	Դասարանը(ները)	Մասնակիցների թիվը
1.	-	-	-

Դպրոցի տնօրենը, մանկավարժական կոլեկտիվը լուրջ և հետևողական վերաբերմունք են դրսևորում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, ալկոհոլի, ծխախոտի և թմրամիջոցների օգտագործման դեմ ուղղված միջոցառումներին: Ամենօրյա բացատրական աշխատանք է կազմակերպվում դպրոցի 8-11-րդ դասարանների աշակերտների հետ:

Կարևորագույն խնդիր է համարվում սեփական երեխային ճանաչելը, նրա վարքագծի կանոնները գնահատելը, երեխային դպրոցում սովորելու հարցում օժանդակելու կարողությունը: Այս ուղղությամբ դպրոցը լուրջ աշխատանք է կազմակերպում աշակերտների ծնողների հետ: Կազմակերպվում են թեմատիկ միջոցառումներ, որոնց համար որպես դիդակտիկա օգտագործվում են բազմաբնույթ պատկերներ, հոլովակներ, որոնք մեկնաբանություններ են տալիս նշված երևույթների և նրանց ծանր հետևանքների մասին:

Հարցումներ են կատարվել ծնողների շրջանում իրենց երեխաների վարքագծի, ծնողների աջակցության, ծնողի մասնակցության, ծնողական ազդեցության մասին:

**Հարցաթերթ №4**

1. Որքանո՞վ եք ճանաչում Ձեր երեխայի մտերիմ ընկերներին:

80,1%-ը գտնում է, որ բավականին լավ է ճանաչում իր երեխայի մտերիմ ընկերներին, 2,6%-ը գրեթե չի ճանաչում, իսկ 12,8%-ը թեթևակի:

2. Դուք Ձեր երեխայի հետ գրուցո՞ւմ եք դպրոցում այլ երեխաների հետ խնդիրներ ունենալու մասին:

61,5%-ը գրեթե ամեն օր գրուցում է, 28,2%-ը հաճախակի է գրուցում, 10,3%-ը՝ հազվադեպ, ընդհանրապես չգրուցող չկա 0%:

3. Ի՞նչ հաճախականությամբ եք գրուցում Ձեր երեխայի հետ նրա դասերի մասին:

77%-ը գրեթե ամեն օր, 17,9%-ը՝ հաճախ, 5,1%-ը՝ երբեմն, ընդհանրապես չգրուցող չկա:

4. Ի՞նչ հաճախականությամբ եք հանդիպում Ձեր երեխայի ուսուցիչների հետ:

31%-ը՝ ամեն շաբաթ կամ ավելի, 10,3%-ը՝ ամեն ամիս, 59%-ը՝ միայն ծնողական ժողովների ժամանակ, ընդհանրապես չհանդիպողներ չկան:

5. Որքա՞ն հաճախ եք օգնել Ձեր երեխայի դպրոցին:

25,6%-ը՝ գրեթե ամեն ամիս, 61,5 %-ը՝ մեկ կամ երկու անգամ, 7,7%-ը՝ երբեք չի օգնել:

6. Այլ ծնողների հետ կապեր պահելու հարցում որքանո՞վ եք վստահ Ձեր կարողությունների վրա: 61,5%-ը լիովին վստահ է, 35,9%-ը՝ որոշ չափով, 2,6%-ը՝ ընդհանրապես վստահ չեն:

7. Որքանո՞վ եք համոզված, որ կարող եք օգնել Ձեր երեխային իր հույզերն ու զգացումները պատշաճ ձևով արտահայտելու: 66,7%-ը լիովին վստահ է, 33,3%-ը՝ որոշ չափով, չկարողացող չկա:

8. Որքանո՞վ եք Ձեր երեխան կարողանում տիրապետել իր հույզերին:

66,7%-ը՝ բավականին լավ, 28,2%-ը՝ որոշ չափով, չկարողացող երեխա չկա:

9. Ի՞նչ հաճախականությամբ եք Ձեր երեխան ընթերցում հաճույքի համար:

46,2%-ը հաճախ է ընթերցում, 48,7%-ը երբեմն ընթերցում է, 2,6%-ը համարյա երբեք չի ընթերցում:

**Մաս 3. Ուսումնական հաստատության գործունեության արդյունավետություն**

Հաստատության գործունեության ներքին գնահատման կարևորագույն մասը ուսումնական հաստատության գործունեության արդյունավետության գնահատումն է: Վերջինս կատարվում է երկու տեսանկյունից՝ արտաքին արդյունավետության կամ, այլ կերպ ասած, կրթության որակի և ներքին արդյունավետության կամ առկա մարդկային, նյութական ու ֆինանսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության տեսանկյունից:

Նախ անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպե՞ս է սահմանվում կրթության որակը կրթական գրականության մեջ: Հարկ է նշել, որ գոյություն ունեն կրթության որակի բազմաթիվ սահմանումներ, ինչը վկայում է այդ հասկացության բարդ և բազմազործոն էության մասին: Այնուամենայնիվ, ներկայումս «կրթության որակ» հասկացության շուրջ միջազգայնորեն ձևավորված համաձայնություն: Ըստ այդմ.

Կրթության որակն արդյունք է այնպիսի ուսումնառության համակարգի, որը համապատասխանում է պետական պահանջներին և սովորողներին ապահովում անհրաժեշտ գիտելիքներով, հմտություններով, արժեքային համակարգով ու որակներով՝ միաժամանակ հնարավորություն ընձեռնելով նրանց սովորել ամբողջ կյանքի ընթացում: Այլ կերպ ասած, կրթության որակն ուսումնական գործընթացի համապատասխանությունն է սահմանված նպատակներին:

- «Կրթության որակը» ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքն է, ուստի ներառում է՝
- **սովորողներին**, ովքեր առողջ են, պատրաստ սովորելու և մասնակցելու ուսումնառության գործընթացին՝ ստանալով իրենց ընտանիքների լիակատար աջակցությունը.
  - **ուսումնական միջավայրը**, որը բարեկարգ է ու անվտանգ, ապահովում է առողջության պահպանումն, ինչպես նաև հագեցած է անհրաժեշտ ուսումնական գույքով և ռեսուրսներով.
  - **կրթության բովանդակությունը**, որը սահմանված է կրթության չափորոշիչներով, առարկայական ծրագրերով, ուսումնական պլաններով ու արտացոլված ուսումնամեթոդական նյութերում և ուղղված է սովորողների մոտ հիմնարար գիտելիքների, կենսական հմտությունների և արժեքների ձևավորմանը, ներառյալ առողջության պահպանման, առողջ սնուցման, ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի կանխարգելման, գենդերային հավասարության և խաղաղության պահպանմանն ուղղված գիտելիքներն ու հմտությունները զարգացնելուն.
  - **որակյալ ուսուցչական կազմը**, որն օգտագործում է աշակերտակենտրոն ուսուցման մեթոդներ.
  - հմուտ ղեկավարվող **ուսումնական գործընթացը** և արժանահավատ ու արդար **գնահատման համակարգը**, որը խթանում է սովորողների առաջադիմությունն ու նվազեցնում անհավասարությունները նրանց միջև.
  - **ուսուցման վերջնարդյունքները**, որոնք ներառում են սովորողների գիտելիքները, հմտությունները, արժեքային համակարգն ու աշխարհայացքը և ուղղված են հասարակության մեջ սովորողների դրական մասնակցությանը»<sup>2</sup>

Հաստատության ներքին գնահատման Մաս 3-ում «կրթության որակի» տեսանկյունից ներառված են սովորողներին, ուսուցման վերջնարդյունքներին, ուսուցման բովանդակությանը, ուսուցիչներին բնութագրող ցուցանիշները և չափանիշները:

